

1046

9(44)

2f-40

Թիֆլիս
1917

Ռուսաց, Ս.-Դ. Բան. Կուսակցութիւն

Գրկեալներ, բոլոր երկրների միացեալ.

ԿԱՐԱ ՑԵՏԿԻՆԱ

Ազատութեան

և Հաշտութեան

ԿՌԻԻԸ

ՌՈՒՍԼԱՆՈՒՄ

Բարդ. Սե-ԴԱ

Գինն է 20 կոպ.

« ԴՈՐՈՒ

2004

1917. ՔԻՖԻՄ.

9(47)

8-40

3854

9(47)

8-40

Ա. Մ.

Ամբողջ աշխարհի հաշտութեան
ծարաւ ժողովուրդների հայացքը նո-
րից ուղղել է Ռուսաստան և այս ան-
գամ աւելի բուռն լարւածութեամբ:
Համաշխարհային պատերազմի երկա-
րատելութիւնն ու խստութիւնը բոլոր
երկրներում էլ ուժեղացրել են հաշ-
տութեան ծարաւը, իսկ ուսական
հսկայական յեղափոխութիւնը մօտեց-
նում է այդ հաշտութեան հնարաւորու-
թիւնը, զարձնում իրական փաստ: Այդ
հնարաւորութիւնը կիրականանայ այն
դէպքում, ի հարկէ, երբ կուող կող-
մերը ցանկանան այդ հաշտութիւնը,
իբր անհրաժեշտութիւն, մի բան որ
ներանց շատ է հարկաւոր:

Յեղափոխութիւնը Ռուսաստանում
ինչպէս փետրւարին, այնպէս էլ այս
անգամ փուլեց հսկայական ոյժով:
Կարծես նոյն յեղափոխութիւնը լինի,
բայց միաժամանակ նոյնը չլինի: Այս
անգամ էլ յեղափոխութիւն անողները
խորը արդիւնաբերական կենտրոննե-
րի պրոլետարիատն է՝ անցիւղէմով-
ըստիայի առաջնորդութեամբ, զիւղա-
ցիութեան նշանաւոր մասի, մանր մեղ-
չանակութեան և զօրքի մասնակցու-
թեամբ:

Բայց ինչպէս նպատակը, այնպէս
էլ այդ նպատակին հասնելու միջոցնե-
րը և ուղիները անպայմանօրէն տա-
քերւում են և անցնում փետրւարեան

22010-60 2

յեղափոխութեան սահմաններին: Ճիշտ է, Առաջին Յեղափոխութիւնը, ստիպեց ոռոսական բուրժուազիային և ազնւականութեան ազատամիտ բաժնին հրաժարել պետական օժտած ու խնամքով սանրած յեղաշրջումից, որը իշխանութեան ղեկը յանձնելու էր մի ձեռքից միւսը: Նա թթւած դէմքով համաձայնեց ցարի իշխանութիւնը կործանելու հետ, մի իշխանութիւն, որ այնպիսի հաւատարմութեամբ պաշտպանում էր կապիտալիստական շահերը: Բայց և այնպէս փետրւարեան յեղափոխութիւնը բուրժուազաքական յեղափոխութիւն էր, որը զլխաւորապէս համաձայնելու էր Ռուսաստանը աշխարհիս ամենադէմոկրատիկ հանրապետութիւն դարձնելու մտքի հետ: մի խնդիր, որն անշուշտ պատմական մեծ և շատ մեծ կարևորութիւն ունի և ուշագրութեան է արժանի:

Պատերազմի բոլոր սարսափներին և դժւարութիւններին կրակում և այդ պատերազմի շնորհիւ Ռուսաստանում ստեղծած դրութեան մէջ վերոյիշեալ նպատակին հասնելու և այսպիսով պրոլետարական ապագայ կուր լաւագոյն պայմաններ ստեղծելու համար Ռուսաստանի սոցիալդէմոկրատիայի աշխարհային սոցիալական թիւ մենշեւիկներն ու աշակողմիան էսէրները միացան ոչ միայն ժանր բուրժուական և գիւղացիական ղեմոկրատիային, այլ և ազատամիտ բուրժուազիային, որի

առաջնորդ ու արտայայտիչը կազմական կուսակցութիւնն է:

Սոցիալիստական այս երկու խմբակները համոզւած էին, որ Ռուսաստանի անտեսական զարգացման ներկայ աստիճանի և հասարակական օրօք պրոլետարական մասսաները, չնայած իրենց բուռն ցանկութեան, անզօր կլինեն տնօրինել ու կառավարել այն ժառանգութիւնը, որ շնորհիւ յեղափոխութեան ընկնելու է իրենց ձեռքը:

Նրանց կարծիքով, միայն հասարակական բոլոր ոյժերի միացումը կարող էր վերջնական յաղթանակ պարգևել յեղափոխութեանը և միայն այդ միացումը կարող էր թոյլ տալ զարգանալու յեղափոխութեան ստեղծագործական ոյժերին:

Եւ անա, փետրւարեան փոփոխութիւնի հետեւցին Ռուսաստանի ղեմոկրական իշխանութեան մեղմամիտները առանց խոշոր չափերի հասնող զասակարգային կուր:

Այն օրից, երբ ջարդւեցին քաղաքական հին շղթաներն ու կապերը, ոռոսական հասարակութեան տարբեր զասակարգերը մղուելիք կուում դէմ առ դէմ չկանգնեցին. ընդհակառակն. պատմութեան մէջ հազար չեղած օրինակով նրանք սկսեցին գործել կատարեալ ներդաշնակութեամբ: Կապիտալիստական դայը և պրոլետարական գառը սկսեցին արածիլ միասին, կողք-կողքի: Գոնէ այդպէս թուում էր, և

շատերը որոնք այդպէս էին ցանկանում, իրենց սրտի իղձը իրականութիւն էլ համարում էին:

Փետրուարեան յեղափոխութեան առաջացրած քաղաքական դրութիւնը արտաւայտեց մի շարք, իրար փոխանակող կողմերին կառավարութիւններով: Փետրուարէն կառավարական խմբաւորումները, փոխուում էին անձնաւորութիւնները, բայց այդ բոլոր կառավարութիւնները երկու ընդհանուր գիծ ունէին. բոլոր փոփոխող կառավարութիւնների միջոցին Ռուսաստանի ներքին քաղաքականութիւնը ընթանում էր յեղափոխական դեմոկրատիայի բուրժուազիայի հետ միացման նշանաբանի տակ, իսկ արտաքին քաղաքականութիւնը — Ռուսաստանի արեւմտեան իմպերիալիստական պետութիւնների հետ ունեցած դաշնակցութեան անունից: Այդպիսով, յեղափոխական Ռուսաստանում ևս, համաշխարհային իմպերիալիզմի հրամանով, միացել էր անմիջապէս, միացել էր այն, որ անհաշտ դասակարգային կրօնով պէտք է բաժանւէր ու կտրւէր:

Բայց դասակարգային ներհակութիւնը և հակասութիւնը թոյլ չեն տալ իրանց հետ հանաք անելու: Դասակարգային հակասութիւնը վերացնել չեն կարող ոչ իմաստուն գիւլիներէ ճառերը, ոչ խորամանկ քաղաքագէտները:

Այդ հակասութիւնները զսպել չեն

կարող ամենակարող բռնցքները: Դասակարգային հակասութիւնները նորից ու նորից երևալու են պատմութեան էջերում և պահանջելու են իրանց իրաւունքները: Ապստամբութիւնները, սովի առաջացրած ըմբոսացումները, գիւղացիական անկարգութիւնները, խառնակութիւնները, հէնց նոր ձեռք բերած ազատութիւնների ամեն տեսակ սահմանափակումներն ու վերացումները — այս բոլորը և ուրիշ շատ նշաններ մասնանշում էին, որ չնայած հայաձայնարարների բոլոր ջանքերին դասակարգային հակասութիւնները Ռուսաստանում պէտք է իրենց ելքը գտնեն դասակարգային կառուցում:

Յեղափոխական դեմոկրատիայի բուրժուազիայի հետ կապած դաշինքը օրեցօր դառնում էր մի շղթայ, որ կաշկանդելու էր երկրի յեղափոխական ոյժերը: Նորոգումը՝ նոր, բարձրագոյն հիմունքների վրայ հաստատուելիք հասարակական յարաբերութիւնների կազմակերպութիւնը աւելի ու աւելի յետաձգւում էր և կորչում մըշուշապա հեռուներում:

Այդ ժամանակամիջոցում սոցիալական ոչ մի արմատական բարենորոգում չի եղել յօգուտ պրոլետարիատի, գիւղացիութեան և մանր բուրժուազիայի:

Նոյն իսկ փետրուարեան յեղափոխութեան ժառանգութեան հաստատու-

մը Հիմնադիր Ժողովին գումարումը
յետաձգում էր ամսից ամիս: Ոչ մի
վճռական քալ չի արւել, որպէսզի
յեղափոխական դեմոկրատիայի՝ հաշ-
տութիւն առանց ռազմատուգանքի,
ազգերի ինքնորոշման իրաւունքով
պահանջը կհանքում կիրաււի:

Ի հարկէ տւած պայմաններում դրժ-
ւաբլի էր վճռուկան քայլեր անել:
Այս քայլերի հետեանքը այն չպէտք
է լինէր, որ կռուող կողմերից մէկի իմ-
պերիալիզմը զարգանար ի հաշիւ միւ-
սի, ժի բան, որ կոչնչացնէր գեոմոկ-
րատական զարգացման առաջին բող-
բովը ռազմիկի կողի կոպիտ կռուակով:
Այդ քայլի հետեանքը պէտք է քննու-
թեան առնէր և դնանտուէր ապա-
գայ, գալիք քաղաքական զարգացման
տէսափէտից: Եւ եթէ է այդ տեսակէտից
նայելու լինենք, հաշտութիւնը մի այն-
պիսի միջոց է, որ հնարաւորութիւն է
ստեղծուծ բոլոր երկիրների իմպերիա-
լիզմը յաղթելու: Հաշտութիւնը, միւս
կողմից, յեղափոխութեան համար մի
անհրաժեշտ պայման էր Ռուսաստանը
աժերող լաջնութեամբ վարելու և ցա-
նելու:

Ռուսաստանի աշխտատաւոր մասնա-
ները աճող դառնութեամբ, սրտի բու-
ռը ցատկով տեսնում էին թէ ինչպէս
այս ժամանակաւոր կառավարութեանը
յաջորդող միւսը շարունակում է ժո-
ղովրդի արեւնն ու բրտինքը թափել
ի վրայիս իշատական նպատակների հա-

մար: Եւ ժողովրդական մասսաների
անհատնում թշուառութիւնները մնում
էին ձայն բառքառոյ յանապատիւ:

Մասնաների տրամադրութեան մէջ
բանաւորներին, գինւորներին և գի. զայրու-
թեան — Բանաւորական 2-րդ բաժան
նորհաւորներում — յիշատակութեան
այդ սղանալարի հայացքներում խոշոր
փոփոխութիւններ են տեղի ունենում:

Նրանց համար պարզուում է՝ որ բուր-
ժուազիայի հետ բարեկամութիւն շա-
բունակելը կործանաբար է և որ դը-
բութիւնը պահանջում է իշխանութեա-
նը տիրանալ և սեփական ձեռքը ձգել։
Եւ այս պարզաբանութեան ընթաց-
քում յաղթող է հանգիստանում բոլշևիկ-
ների լողունգը, որ նրանք առաջագրել
էին հէնց յեղափոխութեան սկզբում։
Խորհուրդներում իշխանութիւնը չա-
փաւոր սօցիալիստների ձեռքից անց-
նում է արժատակաւ բոլշևիկների ձեռ-
քը, սրանց աղբիցութիւնն էլ աջակ-
ցութիւն է դառնում էսէրների ձախա-
կողմեան ինտերնացիոնալիստական
թիւի կողմէց։ Համադրունքը կամք է
և այդ կամքը դարձաւ գործ, իրակա-
նութիւն։

Յեղափոխութեան գալիք հսկայի
ստեղծելը, նրա բանքերը երեւոյց հենց
այն ժամանակ, երբ Պետրոգրադի
պրօլետարիտը ապստամբեց, որպէս
զի այն օրերի ժամանակաւոր կառա-
ւարութեանը ստիպի երկու տարով էլ
հաշտութեան ճանապարհին կանգնելու:

Գիտին առաջալւած, արիւնադող ճիշտ
աշխատէս, ինչպէս ցարիդմի օրերին. յու-
լիսեան շարժումը աշխուածնաշինե
օտիպեց կառավարութեանը իր միջից
դուրս շարտել իմպերիալիստական պա-
րագլուխներին, աւելի պարզ ձեա-
կերպել հաշտութեան բանաձևը, որ-
պէս զի դրանով վերջ տայ պատերազմ
շարունակելու նպատակով այդ բանա-
ձևին գիպումատիական բացադրութիւն-
ներ տալու գործը։ Եւ ահա, հոկտեմ-
բերին հսկայ-յեղափոխութիւնը իր ամ-
բողջ հասակով կանգնեց բոլորի ա-
ռաջ։

Բուլշևիկական լուսնադէմքով ոգևոր-
ւած և առաջնորդող Պետրոպրադի
Խորհուրդը առաջինը եղաւ Կերենսկու
դէմ աշխատաւոր մասսաների ամպս-
տամբութեան դրոշակ բարձրացնողնե-
րից։ Բոլոր Խորհուրդների համառուա-
կան համագումարը վերցրեց այդ դրո-
շակը նրա ձեռքից և դարձրեց իրեն
ընդհանուր դրոշակը։

Յեղափոխական ղեմոկրատիայի իմ-
պերիալիստական բուժուազլայի հետ
համաձայնարար կառավարութիւնը դա-
տարեց գոյութիւն ունենալուց։

Բուլշևիկները անսահման քաջարի
դրոհով հասան իրենց նպատակին։
Իշխանութիւնն այժմ խորհուրդների
ձեռքին է, պրօլետարիատի ղեկատարու-
րան, կամ աւելի ճիշտ ամբողջ աշխա-
տաւոր ժողովրդի ղեկատարութեան կա-
տարւած փաստ է, համայն աշխատա-

ւոր ժողովրդի ղեկատարութեան ենք ա-
սում, որովհետեւ մեծ արդիւնաբերա-
կան կենդանիների պրօլետարիատի, այդ
բոլոր յեղափոխական ուժերի բերե-
ղացած միջուկի շուրջն էին հաւաքել
ու բանւորական բաճկոնում և գինւորի
հազուստներում պարուրւած դիւղա-
քիութիւնն ու մանր բուժուազիան։
Յեղափոխական ածախմբութիւնը, ո-
րին բոլորն էլ մասնակցում էին, վեր-
ջացաւ։ Քաղաքացիական դժւարին ու
ժանր կուռւմ յեղափոխական ղեմոկ-
րատիան ձեռք էր բերելու իր իշխա-
նութիւնը։

Արդեօք սրանք գլխիվայր չեն կանգ-
նեցնում մեր այն ուսմունքները, թէ
առանց հասարակական պայմանների
հասունութեան Ռուսաստանում տեղի
ունեցած յեղաշրջումների նման դէպ-
քերն անհնարի են։ Եւ Ռուսաստանի
տնտեսական զարգացման և նրա ժո-
ղովրդական մասսաների ետաճանցու-
թիւնը, պատմական իրականութեան
և պատմական նպատակների միջև ե-
ղած տարբերութիւնը մահւան դատա-
վճիռ չէ՞ արդեօք բուլշևիկական ապս-
տամբութեան, որին և մի դատավճիռ
ի դէմ յեղափոխութեան։—Այսպէս են
ժառանգում ոչ միայն սոցիալիստները
արտասահմանում, այլ և չափաւոր սո-
ցիալ ղեմոկրատները և սոցիալիստ-
յեղափոխականները Ռուսաստանում։
Այս տխրադին հարցեր էին Եր ստիպել
են այդ, ստիպել, են նրանց — որքան

մեզ տեղեկացնում են ըստգրերը— ար, դէն կատարւած փաստի դիմաց-
բոլորեկական ապստամբութիւնից յե-
տոյ երկչոտ տարակուսանքի մէջ ընկ-
նել, կասկածել աշխատաւոր մասսա-
ների յեղափոխական ոյժերի վրայ և
Կերենսկու իշխանութեան դամբարա-
նի վերեւից կանգնած ոպասել, ըղձալ
լիբերալ բուրժուազիայի նորից աս-
պարէզ գալը։ Ռուստտանը— արքարա-
կիւնները է, կապիտալիստական ար-
դիւնաբերական խոշոր կենդրոններ-
իրենց յեղափոխական պրոլետարիատով
իրարից հեռու են ընկած և սփռւած
են ամբողջ երկիրներում։ Հաղորդակ-
ցութեան ճանապարհները շատ չեն
զարգացած։

Պրոլետարիատը դիւզացիական իդեո-
լոգիցիային, կախւելու աստիճառն դեռ
շատ է մեծ։ Լոյս մասսաները բաղ-
կացած են անգրագէտներից, նրանք
դուրկ են հարուստ գանձարկղներով
ուժեղ կազմակերպութիւններից, չկար
քաղաքական դատախարակութիւն, որ
ձեռք է բերւում, մշակւում շնորու-
թիւնների, ընտրական պայքարի և
պարլամենտարեղմի միջոցով։ Արդեօք
մի թնթեկամիտ աւանդւորա չի այս-
պիսի պայմաններում պրոլետարիատի
գրկատուութեան ձգտել։

Այս դրութիւն հնչում է բանակա-
նօրէն, բայց համ. զեցուցիչ չէ։ Իհարկէ
չի կարելի աչք փակել այն անլուր
դժարութիւններին առաջ, որ ստեղ-

ծում են վերոյիշեալ պայմանները։
Յեղափոխութեան համար նիւթական
պայմանների և ժարդկանց «հասու-
նութիւնն անհրաժեշտ է» միտքը մի
բանաձև է, որ իրականութիւնը, կեանք
կենդանի է և բովանդակութիւն կտայ,
իսկ այդ իրականութիւնը թայլ չի
տալիս որ իրեն նեղեն և դնեն այս
կամ այն շրջանների մէջ։

Պատմական մատերիալիզմը մարդ-
կութեան պատմական զարգացման
բժիշկների, բուժողների և դեղագի-
տների համար մի պատրաստի դե-
ղատոմսների ժողովածու չէ։ Ռուսաս-
տանի անտեսական և սոցիալական և
զարգացումը պէտք է չափել իր սե-
փական չափով և ոչ թէ Եւրոպայի
հին կուլտուրական երկիրների արշի-
նով։ Այդ զարգացումը, շատ դէպքե-
րում միացնում են Ասիան, Եւրոպան և
և Ամերիկան միատեղ վերցրած։ Եւ
եթէ առևտրական ժողովուրդը դեռ չի
անցել կուլտուրայի այն դպրոցը, որ
Միջին և Արեւմտեան Եւրոպայի հա-
մար հանդիսացել են համբարական
քաղաքի կարգերը— ինչպէս այդ ցոյց
են տալիս նրա դեղարւեստը, մանա-
ւանդ. ճարտարագիտութիւնը, իբր ա-
մենասոցիալական դեղարւեստ— ապա
նա ազատ է այն բոլոր մանր բուր-
ժուական տրադիցիաներից ու կապե-
րից, որոնք մեզ մօտ ահագին ծան-
րութեամբ ընկած են մասսաների վրձ-
ուակահութեան վրայ։ Պայմաններն ու

մարդիկ հասունացած են յեղափոխու-
թեան համար, երբ արդէն լայն մաս-
սաները, զգուժ են անտանելի լուծը,
երբ նրանք դադարում են հաւատալ,
որ ղեկավար դասակարգերը ցանկա-
նում և ընդունակ են վերցնելու ժո-
ղովրդի ուսին ծանրացող բեռը: Երբ
այդ մասսաները վստահ են իրենց ու-
ժերին և հաւատացած—այս այդ ե-
րեսթը աւելի շատ բան է ասում,
քան ամեն մի սխուստտիկա:

Այն շարքերը, որոնց յենել էր կը-
րովելը, երևի իրենց մեծամասնու-
թեամբ բաղկացած էին սաղմոսերգու
անգրագէտներից, իսկ նրանք, որոնք
գրոհով վերցրին Բաստիլեան, այնքան
քիչ էին «կրթւած», որ իրենց յեղա-
փոխական լրագիրը հազիւ էին կարո-
ղանում կարդալ: Ռուս պրոլետարներն
ու գիւղացիները հասունացել են յե-
ղափոխութեան համար, իշխանութիւն
ձեռք բերելու կուի համար, քանի որ
նրանք ընթանում են յեղափոխական
ուղիով, քանի որ նրանք պատրաստ
են պետական իշխանութիւն ձեռք բե-
րելու և կուից չեն վախենում:

Ամբողջ քաղաքական իշխանութեան
ձեռք բերելն ու պետական իշխանու-
թիւն ձեռք բերելը նոյնն է: Յեղափո-
խութիւնը չի կարող բաւականանալ,
երբ իր ձեռքն է ձգում քաղաքական
իշխանութիւնը. նա տնտեսութեան,
ինչպէս և սոցիալական բնագաւառում
փրկսփոփայելու է մտերմով, որովհետ

նրանից կարողանայ մի նոր բան կըռ-
ւել Ռուսաստանում: Այս յեղափոխու-
թեան սոցիալական բովանդակութիւնը
նրա կենսական անհրաժեշտութիւնն է
Խորհուրդների իշխանութիւնը գիւղա-
ցիներին կը տար հող, բանւոր դասու-
կին արգիւնաբերութեան կոնտրոլ—յե-
ղաշրջումներ, որոնց ճանապարհին լեռ-
նացած խոչնդոտները շարժման տա-
լիս են պատմական մեծագոյն նշանա-
կութիւն, ոչ միայն Ռուսաստանի, այլ
և ամբողջ աշխարհի համար:

Այս յեղափոխական ծրագիրը կեանք
մտցնելու գլխաւոր պայմաններից մէ-
կը հաշտութիւնն է: Յեղափոխական
կառավարութիւնը ձգտում է հաշտու-
թեան մնալով այն տեսակէտի վրայ,
որ պաշտպանում էին բոլշևիկները պե-
տերազմի սկզբից: Այդ տեսակէտն այն
է, որ «ռուսական պրոլետարիատը ան-
հաշտ թշնամական վերաբերմունք ու-
նի ոչ միայն դէպի կոնտրոնական պե-
տութիւնների իմպերիալիզմը, այլ և
բոլոր երկիրների իմպերիալիզմը, բա-
ցառութիւն չանելով ռուսական իմ-
պերիալիզմի համար»:

«Ռուսական պրոլետարիատը անքակ-
տելի կապերով կապւած է ոչ միայն
գաղնակից երկիրների պրոլետարիա-
տի, այլ և ամբողջ աշխարհի պրոլե-
տարիատի հետ, բացառութիւն չանե-
լով կենտրոնական պետութիւնների
պրոլետարիատին»:

Ահա յիդափոխական կառավարութեան տեսակէտը:

Եւ յանուն այդ տեսակէտի նա ճշգրտում է հաշտութեան: Անեւով զինադադարի առաջին քայլերը, նա իրեն կապում չի համարում և դադանի պարժանագրերով, որոնցով ինչու իմպերիալիզմը կաշկանդում էր և լծում «իր» ժողովուրդն ու երկիրը համաշխարհային իմպերիալիզմի կառքին: Ինչ հետևանք էլ տեսնայ ներկայ գէպում ոռոս բանոր դասակարգի հաշտութեան և իշխանութեան համար մղուող հերոսական կռիւը—մի բան միայն պարզ է, կռիւը զուր չէ: Նա խոր ակօսեք է թողնելու պատմութեան մէջ և ոչ միայն նրա՝ համաշխարհային պրոլետարիատի ըդձած յաղթանակը, այլ և այդ արտամական կռիւի սոսկ փաստը ինքնին ծնելու է մի նոր ստեղծագործական կեանք:

22 Ազգային գրադարան



NL1641845

